

Բնական գազի հաշվառման համակարգերի կատարելագործումը նրա տեղափոխման և բաշխման փուլերում

Բնական գազի հաշվառման համակարգերի կատարելագործման ուղղությամբ ընկերության կողմից տարվող տեխնիկական քաղաքականությունն ուղղված է ժամանակակից բարձր ճշտության դասով ծախսաչափերի ներդրմանը, որոնց համար որպես հիմք ծառայում են փոփոխական ճնշման անկումով աշխատող միկրոպրոցեսորային ծախսաչափային համալիրները, ռոտացիոն և տուրբինային հաշվիչներն ու մեմբրանային կենցաղային հաշվիչները:

Հաշվառման համակարգը Ընկերությանը հնարավորություն է տալիս հսկելու գազի ծախսը.

- Հայաստանի Հանրապետության մուտքում («Пьетро – Фиорентини» ֆիրմայի ժամանակակից բազմաֆունկցիոնալ ծախսաչափային համալիր),
- Գազատրանսպորտն ու գազի պահեստավորումն ապահովող «Տրանսգազ» ՍՊԸ-ի Գծային շահագործման մասնաճյուղերի սահմանազատման կետերում(ժամանակակից ծախսաչափային համալիրներ, «Суперфлоу», «Армфлоу», «Флоубос»),
- «Տրանսգազ» ՍՊԸ մասնաճյուղերի և Գազիֆիկացման ու գազամատակարարման մասնաճյուղերի (ԳԳՄ) սահմանազատման կետերում տեղադրված գազաբաշխման կայաններում (ԳԲԿ) (ժամանակակից ծախսաչափային համալիրներ, «Суперфлоу», «Армфлоу», «Флоубос» հայկական «Ա-2» և ֆրանսիական «Актарис» ընկերությունների կողմից արտադրվող էլեկտրոնային ճշտիչներով կահավորված տուրբինայի և ռոտացիոն հաշվիչներ),
- ազաբաշխման ցանցի հիմնական ճյուղավորումներում առանձնացված դիսկրետ օղակներում ,
- ԳԳՄ մասնաճյուղերի արտադրաշահագործման և տարածքային տեղամասերի սահմանազատման կետերում,
- Բնակավայրերի, քաղաքային թաղամասերի և գյուղերի մուտքագծերում,
- առանց բացառության բոլոր սպառողների մոտ: